ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Սևակ Բազեյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքականության և հարկային վարչարարության մեթոդաբանության գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ք. Վիեննա, Ավստրիայի Հանրապետություն, 2024 թվականի սեպտեմբերի 2-ից մինչև սեպտեմբերի 6-ը

3. Հրավիրող կողմը.

Ավստրիայի իշխանություններ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

«Կանաչ և թվային անցմանը միտված հանրային-մասնավոր համագործակցություն» (Public-Private Cooperation for the Green and Digital Transition) թեմայով գործուղման նպատակն էր հետազոտությունների և վերլուծությունների միջոցով բացահայտել հանրային-մասնավոր համագործակցության շրջանակներն ընդգրկող հիմնական բնագավառների (տրանսպորտ, կրթություն, առողջապահություն, էներգետիկա) իրավական կարգավորման ընթացքում առաջացող հարցերը, ինչպես նաև վերլուծել այնպիսի հարկաբյուջետային քաղաքականության մշակման հնարավորությունները, որը կնպաստի կանաչ և թվային անցմանը միտված հանրային-մասնավոր համագործակցությանը:

5. Քննարկված թեմաները (հարցերը).

Դասընթացի ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

- Թվային անցում. հնարավորություններ և մարտահրավերներ,
- Թվային օրակարգի նախագծում և իրականացում,
- Կանաչ անցում,

- Քաղաքականություններ՝ ուղղված կանաչ անցմանը,
- Սկսնակ ընկերությունները՝ որպես կանաչ անցման շարժիչներ,
- Առևտրային քաղաքականությունները որպես բնապահպանական քաղականություններ.

ԵՄ Ածխածնային Սահմանի Կարգավորման Մեխանիզմ,

- Թվային անցման արագացում,
- Կանաչ և թվային անցման ֆինանսավորում: Հանրային և մասնավոր հատվածի դերը,
- Հանրային-մասնավոր համագործակցություն. Մասնավոր հատվածին կանաչ և թվային անցմանը ներգրավելու մեխանիզմ:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկման հարցերը.

Դասընթացի ընթացքում առանձին հանդիպումներ և ելույթներ նախատեսված չէին:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացի ընթացքում ձեռք բերված գիտելիքները հնարավորություն կընձեռեն եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության մշակման գործընթացը դարձնել առավել արդյունավետ:

Ստորագրությունը, ամսաթիվը *17 սեպտեմբերի 2024թ.*